



<b>Տիրենա Սքավի (Իտալիա)</b>	<b>35,730,637.91</b>	<b>32,943,648.15***</b>	<b>1</b>
<b>Սինոհիդրո Զորփորեյշն Լիմիթեդ (Չինաստան)</b>	<b>33,945,152.29</b>	<b>33,967,068.67</b>	<b>2</b>
<b>Համատեղ ձեռնարկություն Կոբրա Ինստալացիոնես Սերվիսիո (Իսպանիա) և ԼԼանտինա Իգլենիերիա Կոնստրուկիոնի (Իսպանիա)</b>	<b>68,608,140.39</b>	<b>68,530,887.84</b>	<b>3</b>

\* Քսիլյանգ Բեքսին Բոդ Բրիջ Գրուփ-ի կատարած աշխատանքները չեն համապատասխանում պահանջված աշխատանքների բնույթին՝ բարդության, մեթոդների, տեխնոլոգիաների և այլ բնութագրերի առումով՝ ինչպես նկարագրված է մրցութային փաստաթղթերի Բաժին 6-ում (պատվիրատուի պահանջներ): Նշված պայմանագրերը չեն համապատասխանում պահանջված աշխատանքների բնույթին՝ բարդության, մեթոդների և այլ բնութագրերի առումով, քանի որ չկա ներկայացված պայմանագիր, որը լիովին համապատասխանում է Պատվիրատուի պահանջներին: Մասնավորապես, ներկայացված մեկ պայմանագրում առկա չէ կամուրջի/ուղեանցի կառուցում և կապուղիների տեղափոխման փորձ: Մյուս երկու պայմանագրերում առկա է անհամապատասխանություն պայմանագրային գումարի և ըստ ծավալաթերթերի փաստացի կատարված աշխատանքների միջև (ըստ ծավալաթերթերի վերջնական պայմանագրային գումարը որակավորման շեմից ցածր է), ինչպես նաև առկա չէ կապուղիների տեղափոխման փորձ: Մրցույթի մասնակցի տեխնիկական առաջարկը նույնպես ընդունելի չէր: Մասնավորապես. ա) աշխատանքների իրականացման մեթոդոլոգիան ներառում է ճանապարհի մանրամասն նախագծման հետ կապված մի բաժին, որը չի համապատասխանում տվյալ ծրագրի պահանջներին, բ) ներկայացված աշխատանքների ծրագրում նախատեսված է իրականացնել ասֆալտ-բետոնե աշխատանքներ հունվար և փետրվար ամիսներին, գ) ճանապարհային երթևեկության վերահսկման և կառավարման պլանը չի համապատասխանում Տեխնիկական բնութագրերի պահանջներին:

\*\* Չայնա Բոդ ընդ Բրիջ Քորփորեյշն-ի կատարած աշխատանքը չի համապատասխանում պահանջված աշխատանքների բնույթին՝ բարդության, մեթոդների և այլ բնութագրերի առումով, ինչպես նկարագրված է մրցութային փաստաթղթերի Բաժին 6-ում (պատվիրատուի պահանջներ): Թեպետ հայտատուն նշել է, որ շինարարական աշխատանքների ընթացքում իրականացրել է երթևեկությունը հոսքի կառավարում (համարժեք օրական 30,576 ավտոմեքենայի), սակայն տրամադրել է միայն նախքան շինարարությունը իրականացված երթևեկության հոսքի կանխատեսում, ինչն ապացույց չէ, որ նման երթևեկության հոսքը առկա է եղել և կառավարվել է ճանապարհի շինարարության ընթացքում:

\*\*\* Տիրենա Սքավի-ն առաջարկել էր 7,8% գեղձ՝ կիրառելի բոլոր միավոր արժեքների վրա, մրցութային փաթեթի ITB 25.3 կետի համաձայն: